



Ա Մ Ա Վ Ա Գ Ի Բ

ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱԾՈՒՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԹՅԱԿԱՆ

ԹԻՒ Զ. — ՏԵՐԻ Դ.

1871

ՀՈԿՏԵՄՏԻՒՅ 31-

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԲԵՆԻՍՄԻՆ ՖՐԱՆԿԻՆԻ

Կ Ե Ա Շ Ք Ը Ը

(Հ Յ Ի Ռ Ա Խ Ի Ռ Ա Խ Ի Ռ)

Ե.

ՖՐԱՆԿԻՆԻ ՀԵՌԱՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-
ԹԻՒՆԸ.

Գրանկին ամուսնացաւ 1730 թ. իր քը-
սանկը ողբորդ տարեկան հասակին։ Ըստ-

ջուաց սովորութիւնը շարունակելով այժմ
ևս կատարեալ զուարձութիւն և բերկ-
րանք կը գտնէր աշխատանքի մ.ջ. զիշերնե-
րը գոհ սրտով հանդիսատ կառնէր, առաւօտ-
ները զուարթ զուարթ գործի կերթարտ
Նանիր ու դատարկ ցոյցերու մ.ջ բաղդչէր
որոնէր. մինչեւ անդամ և այժմ, երբ լիու-
թիւնն արդէն ոտք դրած էր նորա շէմքին,
առաւօտէն մինչեւ զիշեր հասարակ գոր-
ծաւորի շոր հագած կը բանէր. այժմ ևս
չէր քամահէր պէտք եղած բոպէին սայլի-
44

կով թուղթ տանելու տպարան, այժմ ևս կաւեղին էին նորա անօթները, որով իր պարզուկ ճաշը կընդունէր, անագեայ էր դգալը, որով իր թէյն կըմպէր: Օր մը Գրանկինի կինը փորսելանի թասով կաթ քերաւ նորան, որոյ մէջ արծաթի դգալ մը դրուած էր և նորա ապշութիւնը տեսնելով ասաց. “ Ակրելի մարդս, դուն ևս այնքան արժանի ես փորսելանի և արծաթի, ինչպէս և մեր դրացին ” : — Եյդ առաջին անգամն էր, կըսէ Գրանկին, “ որ արծաթ ու փորսելան երեցան տանս մէջ: ”

Ով որ մինչև այժմ չէ հասկցած Գևոտէի *) խօսքերը, թէ “ Ակսիր ընտանեկանէն և այս տեղին ընդարձակիր զինքդ աշխարհիս մէջ ” , թող Գրանկինի կեանքը դիտէ և այդ իմաստուն խօսքերու մտքին վերահասու լինի: Իր մտաւոր զարգացման վրայ միշտ հօգ տանելով Գրանկին այժմ օրը մէկ ժամ որոշեց շահաւէտ ընթերցանութեան համար, լոիկ սենեակի մէջ նստած հին ու նոր գարուց երեկով հանձարներու հետ կը բանակցէր, իմաստութեան և առաքինութեան դասերուն ականջ կը զնէր և դիտնական նկրտմանց արդիւնքը դիտելով, զանոնք իրեն սեփականելու կը փութար: Բնակիր զըքերու

(*) Տիեզերահոչակ դերմանական բանաստեղծ. Տնաւ 1749 և վախճանեցաւ 1832: Սա և Շիլերը (1759 - 1805) Գերմանական բանաստեղծութեան ամենապայծառ աստղերն են: Միայն այս երկու անմահական բանաստեղծից սքանչելի շարադրութիւնքը բնազրին մէջ իսկ կարդալու համար կարժէ սովորելու դերմանական հարտւստ լեզուն:

համար շատ ստակ կը վճարէր, բայց որքան հարուստ ու սքանչելի զործեր կային աշխարհիս վրայ, որք դեռ նորան յայտնի չէին: Միայն իր վրայ չէր մտածէր նա, այլ հօգ կը քաշէր և նոցա մտսին, որք իր նման դեռ շատ բանէ զուրկ էին աշխարհիս մէջ: Աւ այդ է, իրաւ, աղնիւ մարդոց գլխաւոր յատկանիշը, որ նոքա զբարին ոչ թէ միայն իրենց համար կը ցանկան, այլև ընկերները նորան հաղորդակից անել կուզեն: Բնակիր մատեան մը զիւրին կերպով շատերուն օգտաւէտ անելու միջոցներ որոնելով, 1731 թ. Գրանկին հասարակային զրադարան մը հիմնելու միտք յղացաւ: “ Նորա գաղափարը խկոյն համակրութիւն գտաւ, և յիսուն մարդիկ զիր զնելու համար առ ժամայն քառասնական շելլինդ տալով սրայման դրին, որ այսուհետեւ իւրաքանչիւրը տարին տաս տաս շելլինդ վճարէ: Բաժանորդներու թիւը գնալով բազմացաւ և Գիւլադերֆիայի “ Գրասիրաց խումբը ” տաս տարիէն յետոյ ընկերութեան իրաւունք ստացաւ: Յաւելցնենք ի դէպ, որ այդ ընկերութեան զրատունը 1790 թ. զրեթէ 8,000 հատորներ ունէր: 1850 թ. նոցաթիւը 32,000ի հասաւ, իսկ այժմ 500,000 է: Բնիթերցողս կարող է ինքն ասել, թէ որքան օգտաւէտ էր այդ զրատան հիմնարկութիւնը *) Գրանկինի հայրենեաց համար, որ նորա տուած բարի օրինակին

(*) Տես. Ազգային կրթութիւն. Հրապարակական ընթերցանութիւնք Էդուարդ Լարուկի, տպագրութիւն Պ. Միքայէլ Միանսարեանց, Ս. Պետերբուրգ:

հետեւը այժմ գրեթե ամէն տեղ մի մի հարուստ գրադարան ունի:

Ենսպառելի էր Գրանկլինի աշխատասիրութիւնը: Խռուղթը Անգլիային բերելու փոխարէն, որ միշտ աւելի թանկ կընստէր ուղեց զայն ինքը պատրաստել: Այդ միտքն իսկոյն կեանք ստացաւ և Ամերիկան արուեստի նոր ճիւղով մը հարստացաւ: Այրա գործարանը տարագի տեղ բռնելով ուրիշ քաղաքներու մէջ ևս թղթի գործարաններ հիմնեցին: — Այրա տպարանի մէջ ամենաշմուտ զրաշարներ կը վարժուեին. երբեմն Գրանկլին այլև այլ գործիքներ կընծայեր նոցա և հեռաւոր քաղաքներ կուղարկեր, որ գնան և իրենց արհեստն ուրիշներուն սովորցնեն և կամ ինքեանք տպարան բանան: Եթէ բանային, առ ժամանակ ստակով ևս կ'օգնէր, և երախտաղարտ աշակերաններն երբէք չեին չարագործէր նորա վեհանձն մարդասիրութիւնը:

1732թ. Գրանկլինի և գաղթականութեանց համար առանձին նշանակութիւն ունեցաւ: Այդ թուականին Վիլդինիայի անտառներու, յատկապէս Վաշինգտոն անուն հասարակ մարդու տան մէջ մանուկ մը լոյս տեսաւ, որ Գահորդ անուն ընդունեց: Գահորդ Վաշինգտոն: Իրեւ աստուածային գաղտնի խորհուրդ մը, մարդկային աշքերէ հեռու, ուշիկ կապրէր նորորանի մէջ և աշխարհս գեռ չըդիտէր, որ այդ հրաչեայ մանկիկը օր մը փառօք և յաղթութեամբ սուսեր հանելու էր յազատութիւն բռնօրէն Ճնշեալ հայրենեաց:

Վակայն մէկ ուրիշ բան մ'ես լցա տեսաւ նոյն իսկ թուականին, ելանելով աղ-

նիւ Գրանկլինի սրտէն ու գլխէն—այդ էր մէկ Օրացոյց, որ քսանեհինդ տարի նոր ի նորոյ խրառելով և ուռուցանելով նահանգէ ի նահանգ պիտի շրջէր և զօրութիւն ու լոյս տար աղգին—առաջիկայ գժուար փորձանիքներուն արիապէս համբերելու համար: Արորանի մէջ մանուկ դիւցազն ևս պատանի դառնալով կազդուրիչ մնունդ ստանալու էր այդ զբքոյիէն:

Պէտք է որ արեւ ճառագայթէ, պէտք է որ լոյս սփոռէ տիեզերքի մէջ. պէտք է որ ազնիւ բնաւորութիւնը «սէր շնչէ, ի սէր կենայ, սիրով ի մահ իսկ ննջէ», . պէտք է որ մէկ անգամ տեսած ծշմարտութեանը հպատակելով զայն քարոզէ: Վրգելք մը չկայ աշխարհիս երեսին, որ կարողանար երկիւզ ազդել նորա սրտին և խափանէր հետեւել երկնային ձայնին—ոչ հուր, ոչ բանտ և ոչ սուր:

Վմենայն առաւօտ երիտասարդ Գրանկլին—նա զեռ նոր քսանեվեց տարեկան էր, երբոր օրացոյցի առաջին տարեհամարը հրատարակեց—միայնակ սենեկի մէջ կը նստէր և առաքինութիւն ու իմաստութիւն քարոզելու քահանայական պաշտօնի մէջ զինքը կը մարդէր: Իր անցեալ՝ դասերով հարուստ կեանկը զիտելով, նա կը տեսնէր, որ ինչոր բարի բան արած ունէր, իր ներքին մարդոյ լաւագոյն ձայնին հնազանդելով արած էր և ինչ որ վատ—նորան հակառակելով:

Օրացոյցը լոյս տեսաւ Բիչարդ Առունդերսի կեղծ անուամբ «Կեղծ Բիչարդի Օրացոյցը, վերնազրով:

Այդ օրացոյցի մէջ գործած ուած գրութեան եղանակի վրայ երկար զրուցելու փոխարէն, լաւ է որ կաոր մը յառաջ բե-

թենք նորա մշտին: Առանենք 1758 թ. համարը, օրացոյցի վերջին համարը, որոյ մէջ Թրանկլին (դարձեալ Ռիչարդ Ասունդերսի անուամբ) կենսական իմաստութեան գասերը զանազան հին հատորներէն միասին գումարելով, մէկ պատմութեան մշտից գեղեցիկ ամփոփած էր: Այդ գասերէն շատերը, ինչպէս որ ընթերցողս շուտով կը տեսնէ, անմահական առաջներու կարգըն անցած են:

“Հարստութեան ճանապարհ,, կոչուած յօդուածի սկիզբն հեղինակը կը լսէ, թէ շատ կուրախանայ, երբոր ‘իսեղջ’ Ռիչարդի,, խօսքերը ուրիշներու շրժունքէն կը լսէ և կը շարունակէ հետեւեալ կերպով.

“Տեսէք, թէ որչափ պիտի ուրախանայի հետագայ անցքի վրայ: Քանի մ'օր առաջ ես կանգ տուի ձիուս այն տեղ, ուր որ սնանկացեալ վաճառականի մը՝ զոյքերու ծախուելուն պատճառով՝ ահազին բազմութիւն մը գումարուած էր: Կուանահարկութեան ըոսէն տակաւին հասած չէր, մարդիկ վատ ժամանակներու վրայ կը զրուցէին: Կոցամէն մին մոքուր ու պարզակ հագուած ալեւոր ծերունու մը դիմելով, ասաց. “Հայր Աբրահամ, խօսիր, լսենք թէ ինչ կը սիս աս վատ ժամանակիս մասին: Աբրի օք այս ծանր հարկերը մեր երկիր իսպառ չեն քանդեր, ինչպէս անէինք, որ կրնայինք վճարել այդ հարկերը: Ի՞նչ խորհուրդ կուտաս, հայր Աբրահամ,, :

Հայր Աբրահամ տեղէն բարձրանալով պատասխանեց. “Եթէ կուզէք ականջ զընել խորհրիս, ասելիքս կարճ կը կապեմ, որովհետեւ իմաստունին և մէկ խօսքը բաւական է, իսկ յիմարին հազարն ևս քիչ ինչպէս որ կը սէ խեղջ Ռիչարդը,, :

Սմենեքեան յայտնեցին, թէ կը ցանկան լսել, և ծերունին, մինչդեռ մարդիկ նորա շուրջը խոնուելով տեղ բանելու վրայ էին, շարունակեց խօսքն և ասաց:

“Ենկերք և դրացիք՝, մէր հարկերն իրաւ շատ ծանր են: Եթէ տէրութենէն սահման ածներէն ջոկ ուրիշ հարկեր չունենայինք, դեռ կարելի էր համբերել և թերեւս հեշտիւ վճարել. բայց տեսէք, որ մէք նոցամէն զատ ևս դեռ շատ հարկեր ունինք վճարելու: Տէրութեան հարկերէն երկու անգամ աւելի ծանր հարկ դրուած է վրայներս մեր ծուլութեամբ, երեք անգամ աւելի մեր հպարտութեամբ ու հինգ անգամ աւելի մեր յիմարութեամբ, և այս հարկերը ոչ մէկ իշխան կամ պատգամաւոր կարող չէ թեթեացնել կամ նուազցնել: Աակայն եկէք, խորհուրդ տեսնենք գուցէ փրկութեան հնար մը զըտնենք. ով որ ինքն իրեն կօդնէ, Աստուած ևս նորան կօդնէ, կը սէ խեղջ Ռիչարդը օրացոյցին մէջ:

Եթէ տէրութիւն մը կամենար, որ աղղըն իր ժամանակի տասներորդ մասը առանց վարձատրութիւն ստանալու նորան ծառայէ, ապաքէն միթէ չէիք ասեր, թէ շատ կուզիտ տէրութիւն է. բայց դատարկութիւնն աւելի ժամանակ կը խղէ մեզմէն, եթէ հաշուենք այն բոլոր ժամերը, որ կը վատնենք անգործութեամբ, սնոսի վայրաբանութեամբ և կամ անօգուտ գործերու և նաևնիր ձեռնարկութեանց վրայ: Օրուլութիւնն իր ետևէն հիւանդութիւն կը բերէ և մեր կեանքը կը կարճէ: Օրուլութիւնը ժանդէ, որ կապականէ և կուտէ, իսկ աշխատութիւնը միայն կը հնացնէ, և շատ անգամ գործածուած բանա-

լին քանի գնայ աւելի կը փայլի, ինչպէս որ կըսէ խեղճ՝ Ռիչարդը: Ի՞նչքան ժամանաւ կը կորցնենք քնոյ վրայ, մոռնալով որ քընող աղուէսը հաւ չի բոնէր և որ զիրեղմանի մլջ զեռ բաւականի ժամանակ կունենանք քնելու, ինչպէս որ կըսէ խեղճ՝ Ռիչարդը: Աթէ ամէն բաներէն ամենաթան կաղինը ժամանակն է, ապաքէն նորավատնումը միթէ պարսաւելի շուայլութիւն չէ. կորած ժամանակը յետ չիգար վերստին, կըսէ խեղճ՝ Ռիչարդը: Աւրեմն, եղբայրք, արթուն լինինք, հսկենք և զործենք և շահաւետ բան զործենք: Եյդպիսով ամէն բան, որ մինչեւ այժմ դժուար կըթուէր մեզ, կը թեթևենայ և ի գլուխ կուզայ: «Օսութիւնն ամէն բան կը ծանրացնէ, իսկ աշխատասիրութիւնն ամէն բան թեթև կընէ, և ով որ ուշ կը զարթի, ամբողջ օրը պատէ պատ կընկնի և հազիւ երեկոյեան նպատակին կը հասնի. պղերզութիւնը տարաամ կը շարժի և սրավագ աղքատութենէն կըմբոնուի, ինչպէս որ կըսէ խեղճ՝ Ռիչարդը: Առւզե՞ն լինիլ առողջ, հարուստ, իմաստուն—ջան զիր զործիդ առաւօտեան զուարթուն:

Երդ, լաւ ժամանակներու յուսով ու կարօտով ի՞նչ օգուտ կըստանանք, ներկայ ժամանակիս բարուորումը միթէ՞ մեր ձեռքէն կախուած չէ: Աշխատասիրութիւնը կարօտելու հարկ չունի, և ով որ յուսով միայն կապրի, անօթի կը մեռնի: Չկայ հանձար առանց փութոյ. օգնեցէք ինձ ձեռներ, քանիզ չունիմ ես զյուքիր: Երշեստի յատակն ոսկի է, ինքը յարգելի, բայց միայն պէտք է որ մարդս զայն սիրով կատարէ: Քաղցը թէն կը մօտենայ աշխատաւոր մարդու շէմքին, բայց չի կընար ներս մըտ-

նել. ներս չի մաներ և դատաստանի պաշտօնեան, որովհեաւ աշխատաւորը պարտքերը միշտ կը վճարէ, իսկ անհոգը կը շատացնէ: Դնենք, որ ոչ գանձ գտած ես և ոչ հարստութիւն ժառանգած— փոյթչէ. աշխատասիրութիւնն է բաղդի հոյրը: Սատուած ամէն բան կը չնորհէ աշխատասէրին, ուստի գնա, զի՞ր ձեռքդ արօտի մածին, մինչ ծոյլերը մնան տարաամ ի մլջ մահճին և թող շտեմարանքդ լիութեամբ ուռչին: Եշխատիր քանի որ օրը կըտեի, քանիզ չգիտես, թէ վաղն ինչ արգելք կը գտնես: Ո՞եկ այսօրը երկու վաղն թանկ է: Աթէ ունիս վաղն անելու դործ կարեոր. մի յետ ձզիր և վերջացուր իսկ այսօր: Աթէ սպասաւոր լինէիր, միթէ չիր ամաչեր անգործ երեւելու բարի տիրոջդ առջե. արդ, քո տէրը ինքդ ես. ամաչեր ուրեմն, եթէ ինքդ քեզ անգործութեան մլջ գտնես: Որովհետեւ այսքան բան ունիս անելու յատկագէս քեզ համար, ընտանիքիդ համար, հայրենիքիդ ու աերութեանդ համար, ուստի այգուն այգուն ոտքի կանգնիր և տես, որ արել վայրնայելով չասէ, թէ նա պառկած է զեռանիտառունակ: Կատարիր գործդ առանց ձեռնոցի և մի մունար, որ ձեռնոցով կատուն չի բոնէր մուկ: Մեր գործերը շատեն ի հարկէ և ձեռներս տկար, բայց այդ ոչինչ—ամէն բան կը յաջողի, «միայն թէ սիրով, հանդարս ու խելօք ջանք դընենք բարւոյն ու չընինք անհոգ», :

Ինձ կը թուի թէ ձեզմէն մի քանիք կըսին, միթէ մարդս բնաւ հանգիստ և ազատ ժամ շնորհելու չէ իրեն: Բարեկամ, լսիր, թէ ի՞նչ կըսէ այդ մասին խեղճ՝ Ռիչարդը: Աթէ կուզես ազատ լինել, լաւ

գործածէ ժամանակդ և ոչ մի ըստէ մի կորցներ, ըստ որում ոչ մի ըստէի վստահել կարող չես։ Եզատութեան կը հասնի փութածան մարդը միայն, իսկ գանդաղը—յաւիտեան, որովհետեւ ազատութիւնն ու դանդաղ ծուլութիւնը անզուգելի բաներ են։ Կը կարծես, թէ ծուլութիւնն աւելի քաղցր կեանք կրնծայէ քեզ, քան թէ աշխատանքը։ Աչ քանզի դատարկապորտ ծուլութենէն շատ վշտեր կը ծազին և անօգուտ հանգստութենէն դառն հոգսեր։ Փախիր զուարձութենէն, և նա ինքն ետեկդ կը վազէ։ Լաւ պահիր խանութդ և նա քեզ լաւ կը պահէ։ Այթէ կուզես, որ գործդ յաջողե, ինքդ զնա ետեկն, եթէ չես ուղեր—ուղարկիր ետեկն։ Խնամքի պակասութիւնն աւելի մեսասակար է, քան թէ հմառութեան պակասութիւնը։ Աւրիշներու խնամքին վրայ ապաւինելը—շատերուն կորուստ բերած է. քանզի աշխարհիս գործերուն մէջ մարդս քանի քիչ վստահէ ուրիշներու վրայ, այնքան աւելի իրեն կ'օգտէ։ Գործերդ ինքդ հոգա—այս է ամենալաւ բանը։ Աշխատասեր ուսանողը անշուշտ կըստանայ զիտութիւն և շրջատես մարդը հարստութիւն, ինչպէս որ քաջը զօրութիւն և առաքինին արքայութիւն։ Կուզի՞ս դանել հաւատարիմ ծառայ, ծառայիր ինքդ քեզ։ — Ամենամանը գործերուդ վրայ անզամ հոգ տար. որ մը մէկ բեկորի (մեխ, գամ) պակտելով նալը կորաւ, նալի պակսելով ձին կորաւ, ձին պակսելով ձիաւորը կորաւ—թշնամինհաստ ետեկն ու սպանեց. այդպէս ամենայն ինչ կորաւ, որովհետեւ հոդ չէր տարած գամի պէս չնչին բանի վրայ։

Եյսքանը հերիք թող լինի, ընկերք իմ, հոգատարութեան և աշխատասիրութեան մասին, որ իւրաքանչիւր մարդ ունենալու է սեփական գործերու նկատմամբ։ Աակայն ով որ կուզէ հաւասարի արդիւնք քաղել այդ բաներէն, պէտք է որ չափաւորութիւնը բանեցնէ կեանքի մէջ։ Որքան կուզես քրտինք թափէ, աշխատէ, բայց թէ վստակդ պահել չը կրնաս, աղքատ կը մնաս, կըսէ խեղճ՝ Պիչարդը։ Պարարտիսհանոցը նիհար կտակ կը զրէ։ Կուզի՞ս հարուստ դառնալ, ինչ փութով որ կը վաստիես, նոյն փութով ալ պահպանիր։ Նորկաստանով Ապանիացիք չը հարստացան, որովհետեւ ծախքերն աւել էր, քան արդիւնքը։

Աւրեմն մոռցէք ձեր թանկ յիմարութիւնները, և ծանր ժամանակներու, հարկերու վրայ տրանջելու հիմք չի մնար այնուշետե։ Վէկ շրայլութիւնը աւելի թանկ կը նստէ, քան թէ երկու մանկանց կը թութիւնը, կըսէ խեղճ՝ Պիչարդը։ Դուք կը կարծէիք թերեւս, որ քիչ մը թէյ, երբեմն փունչ, երբեմն ընտիր ծաշեր, քիչ մաւելի սիրուն շորեր և մերթ ընդ մերթ փոքրիկ խնջոյք շատ թանկ չեն նստեր. սակայն միտներդ բերէք, սիրելի բարեկամք, որ հատիկները շատնալով կոյտ կը կազմեն։ Զգոյշ եղէք փոքր ծախքերէն. երբեմն հերիք է փոքրիկ ծակ, որ մէջ նաւ գնայ ծովի տակ, կըսէ խեղճ՝ Պիչարդը։

Դուք հաւաքուած էք այժմ այս գտարկ պաճուճանքն զնելու. այդ բաները դուք բարիկ կանուան էք, բայց քիչ մը խոր նայեցէք, և կը տեսնէք որ թերեւս պարի են։ Յոյսերդ դրած էք էժանութեան վրայ և իրաւ, գուցէ յատուկ գնէն էժան ծա-

խուին, բայց և այնպէս, եթէ ապրանքը անշուշտ հարկաւոր չէ, միշտ թանկ կը նըստի: Օձէւ ամեր մէկ փարայ, նախ պիտոյիդ մտիկ արա, կըսէ խեղճ Ռիչարդը և կաւելցնէ, թէ չպէտք բաներ գնելով, պէտքերն ալ կը ծախես շուտով:

Եյդով կուղէ ասել թերես, որ էժառութիւնը միայն երեւութական է և ոչ խսկական, կամ թէ առքդ աւելի վնասակար է, քան օգտակար, ըստ որում գործիդ հարկաւոր զրամը կը նուազացնէ: Վիւս տեղ նա կըսէ, թէ էժան գնելով շատերն իրենց տունը քանդեցին:— Խմաստուն մարդիկ ու ըիշներու վնասէն բան կուսանին, իսկ յիմարներն իրենցէն անդամ չեն խրատուիր: Ըատ մարդիկ գատարկ որովայնով անկողին կերթան և գերդաստանը քաղցով կիսամահ կընեն, միայն մէկ նոր զգեստով պՃնելու համար: Աերպաս, մետաքս, թաւիշն ու ասուին շատերուն օջախը մարեցին: Եյդ իրելը կեանքի պիտոյքներ չեն, բայց և այնպէս ո՞քան մարդիկ տենչանօք կը փափազին նոցա, քանզի սիրուն են արտաքուստ: Վարդուս արուեստական, շինծու պիտոյքներն այդպիսով կըբազմանան, մէկ աղքատի փոխարէն հարիւր կարուեալք յառաջ կուդան: Եյդպիտով մեծատունները կը չքաւորին և պարտք կառնեն այն մարդիկներէ, զորս առաջ կատէին և որք աշխատութեամբ ու չափաւորութեամբ իրենց պատիւն և տունը կը պահեն: Ոմանք փոքրիկ հարստութիւն ժառանգելով կը կարծեն, թէ անըսպառելի է, զեռ ցերեկ է և զիշերը հեռու, կըսեն նոքա. շատէն քիչ հանուելով վընաս չի գար: Վանկտիք ու յիմարք կը հաւատան, թէ մէկ փարան ու քսան տարին,

բնաւ վերջ և ծայր չունին. բայց նայիս ալիւրի տոպրակին, եթէ մշէն միշա հանես ու վրայէն նորը չ'ածես, շուտով կը հասնես յատակին, կըսէ խեղճ Ռիչարդը և կաւելցնէ, թէ երբ ջրհորը ցամաքէ, կիմանան յարդը ջուլի:

ՊՃնասէր հպարտութիւնը պատուհաս է աշխարհի համար: Հպարտութիւնը յանդուդն աղքատի է, ինչպէս և կարօտութիւնը, թերես աւելի սկերես: — Աէկ զարդ գնելէդ եալ բակտէ տասն հատ ալ վրայէն աւելցնես, որ չափը զտնես: Բայց խեղճ Ռիչարդը կըսէ, աւելի հեշտէ առաջն փափազը Ճնշել, քան թէ յաջորդները յագեցնել: Եւ աղքատի յիմարութիւնը, որ կուրօքէն հարուստին նմանել կուղէ, նուազ չի այն գորտի յիմարութենէն, որ եղին նմանել ուղելով փքուեցաւ ու պայթեցաւ:

Վեծ նաւելը կարող են աղատ աղատ մտնել ծով, փոքրիկները պարտաւոր են ճամբայ բռնել եղելքով: Հպարտութիւնը ճաշ կուտէ սնափառութեան հետ, ընթըլքը ատելութեան հետ: «Եօյնպէս հպարտութիւնը լիութեան հետ կը նախաձաշէ, կարօտութեան հետ կը ճաշէ և խայտառակութեան հետ կընթըլէ: Եւ ի՞նչ զին ունին վերջապէս այդ հպարտութիւնը, փքանալը, շուք ու գարդը, որոց համար մարդիկ այնքան տառապանք, աղէտ և վիշտ կը քաշեն. ոչ առողջութիւն կուտան մարդուս, ոչ ցաւերը կը մեղմեն: Աէկ մազի չափ չեն բերեր պատիւ, այլ միայն նախանձ ու չարիք անթիւ:

Երդ միթէ յիմարութիւն չէ՝ այդպիսի չնչին բաներու համար պարտքի տակ ընկնելը: Եյս վաճառման պայմանները վեց

ամսուայ վարկ (քրիզի) կուտան մեզ, և
մեզմէն շատերը թերես միայն այդ պատ-
ճառով եկած են այս տեղ, որովհետեւ քը-
սակէն նազդ դրամ հանել չեն ուզեր և
առանց ստակի դիւրաւ պճնելու յոյս ու-
նին: Իսայց մտածեցէք, եղբայրք, թէ ինչ
կընէք պարտքի տակ մտնելով: Դուք իշ-
խանութիւն կուտաք ուրիշին ձեր ազա-
տութեան վրայ: Աթէ որոշեալ ժամանա-
կին պարտքը չը հատուցանէք, պարտատէ-
րին հանդիպելու պիտի ամաչիք, հետը խօ-
սելու պիտի երկնչէք, ողորմելի, ստորա-
քարշ, թշուառական ներողութիւններ
պիտի յառաջբերէք, հետզետէ ձեր ար-
դարութիւնը կորցնէք և վերջապէս մին-
չե ի վատթար ստութիւնը նուաստանաք:
Ատութիւնը երկրորդ մեղքնէ, պարտք ա-
նելը—առաջին: “Այնպէս, ուզիզ կանգ-
նել շատ դժուար է դատարկ պարապ քը-
սակին:

Ի՞նչ կըսէիք, եթէ իշխան մը սաստիկ
հրովարտակով, բանտ ու կապանք սպառ-
նալով արգելէք ձեզ՝ արանց և կանանց ըստ
չափոյ կարողութեան հագնվելու: Ոչ ա-
պաքէն կըսէիք թէ ազատ էք հագնուելու,
ինչպէս որ կամենաք, որ այդ իշխանը բըռ-
նակալ է: Երդ միթէ չէք տեսնէր, որ այդ
խկ հագուստի համար պարտքի մէջ ընկ-
նելով կամովին բռնակալութեան տակ կը
մտնէք: Պարտատէրը զօրութիւն ունի իր
ուզածին պէս ձեր ազնուութիւնը խլելու:
Եպրանք գնելին յետոյ հատուցման վրայ
գուցէ շատ քիչ կը մտածէք. բայց փոխա-
տուն ունի աւել յիշողութիւն, քան փո-
խառու: Փոխառուն փոխատուի ստրուկնէ
և պարտապանը պարտատէրի ծառան,
ուստի ատիր այդ կապանքները, պահպա-

նիր ազատութիւնդ և հաստատիր ինք-
նակախութիւնդ. եղիք աշխատասէր և
ազատ, եղիք չափաւոր և ազատ: Առ այժմ
գուցէ շատ լաւ վիճակի մէջ ես և քիչ մ'
աւելի ծախք անելն անմնաս կը համարես.
բայց յիշէք, որ ծերութիւն կայ, նեղու-
թիւն կայ: Արդիւնքը վաղանցուկ է, բայց
ծախքը միշտ կայ ու կայ, քանի որ կապ-
րես: Եւելի հեշտէ երկու հաց շինել քան
թէ մէկը տաք պահել. ուստի, լաւէ քնել
քաղցած փորով, քան թէ զարթել պարտ-
քերով: Աթէ քրտամբ վաստկածդ պահ-
պանես, գտած կլինիս իմաստութեան քա-
րը, որ բոլորը ուսկի կը դարձնէ: Աւ երբ
որ իմաստնոյ քարը գտնէք, այնուհետեւ
աւելի չէք գանգատեր վատ ժամանակներու
և չափազանց հարկերու վրայ:

Եյդ է, բարեկամք, բանականութեան և
իմաստութեան դասը. սակայն չափազանց
յոյսեր մի՛ գնէք աշխատասիրութեան,
ժուժկալութեան և խոչեմութեան վրայ,
թէ դոքա պատուական բաներ են: Ա-
ռանց Աստուծոյ օրհնութեան ամենայն
ինչ կը մնայ ունայն, կըսէ խեղճ Ռիշարդը.
ուստի խոնարհաբար խնդրեցէք Աստու-
ծոյ օրհնութիւնը և գթոտ սրտիւ օգնե-
ցէք այն ընկերներուն, որք առ այժմ զուրկ
են նորամննեւ:

Դարձեալ մի խօսք. “Ով որ չուզեր խոր-
հուրդ լսել, շատ դժուար է նորան օգ-
նել,,:

Եյդպէս աւարտեց ծերունին իր ճառը:

Մարդիկ ուշադրութեամբ ականջ դը-
րին, խրաները շատ հաւնեցին, բայց նոյն
խկ ժամուն—ասես թէ հասարակ քարոզ
լինէր լսածները—բոլորովին հակառակը
գործեցին. որովհետեւ սակարկութեանը

կսուելուն պէս աղևորի խօսքերն և իրենց սրտի երկիւղն մոռնալով, կուրօրէն յարձակուեցան ապրանքներու վրայ:

Դարեսիրտ ծերունին, ինչպէս որ կերեի, օրացոյցն հիմնօրէն ուսումնասիրածու լաւ մարսած էր: Վնունիս ստէպ յիշուելը ուրիշներուն գուցէ ձանձրոյթ կը պատճառէր, այլ ոչ ինձ, ընդ հակառակն, անձնասիրութեանս համար այդ շատքաղցը փաղաքշանք էր, թէև հաստատ գիտէի որ իմ անուամբ ասուած իմաստուն խօսքերու տասներորդ մասն անգամ իմը չէր յատկապէս, այլ միայն արդիւնք էր հնձոց, որ ես հնձած էի ամենայն գարերու և աղգերու առողջ բանականութեան դաշտի վրայ: Երդ իմաստուն խօսքերու կրկնութիւնը վերստին օգուտ բերաւ ինձ. քանզի թէև առջեկ նոր կատացու մը գնելու միաք ունէի, բայց ծերունու ձառը լսելով որոշեցի բան չըգնել, և վերադարձայ դէպի տուն հին կապաս այլ ես քիչ մ'երկար հագնելու մտքով: Ընթերցող, եթէ դուն ալ այդպէս անես, ինձի նման կը շահուիս,, :

Դառնալով այն “տասանորդիս, պէտք է ասել, որ Ֆրանկլին համեստութեամբ շատ կը փոքրացնէր իր վաստակաց յատուկ զինը: Եյն խորհուրդները հոսած էին նորա հողիէն, աղքիւրը նորա կեանքի մէջ էր: Խմաստութեան գոհարներէ շատերը գուցէ աղզի շըթունքէն ու գըքերէ հանուած էր, բայց և այնպէս խորին պատւոյ արժանի էր որ նա մէկ անգամ գտած բանին նոր, առանձին կնիք կուտար, որ աղզի համար փրկաւէտ բաներուն միշտ աչք ու ականջ կը դնէր և պահուած դանձերն ի լոյս հանելով զանոնք ընդհանուր սե-

փականութիւն շինելու ուղիղ ձամբան զիտէր: Վերոյիշեալ յօդուածը “Արստութեան ձանապարհն,, անունով ոչ թէ օրացոյցի միջնորդութեամբ, այլ և մասնաւոր տպագրութեամբ շատ տարածուեցաւ: Եյլ այլ քաղուածներ մեծ թերթի վրայ տպուելով ապակեոր շըջանակի մէջ պատերու վրայ կախուեցան իբրև զարդ: Օրացոյցը արդէն առջի համարէն սկսեալ մեծ համակրութիւն ստացաւ: Ժողովրդի անտեսական և բարոյական յառաջադիմութեան վրայ դեռ երբէք այդպիսի խնամ տարուած չէր: Տարիէ տարի օրացոյցի բաժանորդաց թիւը բազմանալով վերջապէս 10,000 ի հասաւ, որ այն ժամանակ Վմերիկայի մէջ չը տեսնուած րան էր: Եւ որքան հետեւողներ գտաւ Ֆլորանկլին այդ ասպարէզի վրայ: Օրացոյցի միջնորդութեամբ ժողովրդի մէջ լուսաւորութիւն մտցնելն ընդհանրապէս իբրև ամենայարմար եղանակ համարուելով այդ միջոցը այնուհետեւ շատ ու փոքր յաջողութեամբ սկսաւ ամենայն տեղ գործածուել: Եզդային օրացոյցներու թիւը, որք Ֆրանկլինի ժամանակէն Եւրոպայի մէջ հրատարակուել սկսան, հարիւր հազարներով պէտք է համարել:

Ֆրանկլինի զրութեան եղանակը միշտ ամենալաւը կը մնայ ազգասիրական գործունէութեան համար: “Օրացոյցի մէջ,, կըսէ Մինյէն, Ֆրանկլին հիանալի պորզութեամբ կուսուցանէր զիւղական տընտեսութեան, անտանարուծութեան, արհեստից և մարդկային առողջապահութեան համար կարեոր միջոցները և ժողովրդական իմաստութեան անպածոյց ձեռով ցոյց կուտար այն կանոնները, որք

մարդկային բաղդի հիմքը կը կազմեն։
“Խեղձ՝ Ծիչարդի իմաստութիւնը,, ա-
ռաջնորդ է գործի, հսկողութեան, չափա-
ւորութեան, խոհեմութեան և ազնուու-
թեան։ Ամենահասարակ խօսքերով, ա-
մենաձշմարիտ ու մաքուր ոճերովնա խոր-
հուրդ կուտայ ազգակիցներուն և բարոյա-
կանութիւն կը քարոզէ յանուն շահի։
Նորա բոլոր խորհրդածութիւններու նը-
պատակն այս է, թէ առանց առագին-
նեան հաստատուն լահ և բաղդ չէայ։ Եյս
հայեցողութեան մէջ հետզհետէ զօրանա-
լով վերջին տարիները նա կըսէր, թէ ա-
ռանձին մարդու և թէ տէրութեան բաղ-
դի միակ երաշնաւորն և անսուտ հաշուե-
ցոյցը առաքինութիւնն է։ Ամենախարդախ
մարդն անդամ, կըսէ նա, ազնիւ մարդ կը
դառնայ, եթէ առաքինութեան օգուտը
ձանաչէր։”

Օրացոյցի տարածման եղանակին մէջ
անդամ գործնական ձամբայ կը բռնէր։ Ա-
մերիկայի մէջ մինչեւ նոր ժամանակը հին
լաթերը սովորաբար դէն կը ձգուէին. Ֆր-
րանկլին կը խոստանայ, որ պատրաստ է
ստակի տեղ մէկ մէկ օրացոյց տալ հին
լաթ բերողներուն և այդպէս հնոտիները
կուգան կը դիզուէին նորա թղթի գործա-
րանին մէջ։ Եյդ ձեռնտու եր որպէս վա-
ճառողին, նոյնպէս և գնողին։

Երդ, ստէպ կը պատահի աշխարհիս մէջ,
որ մարդուս բարի գործելու ազնիւ սէրը
նորա հարստանալին ետքը հետզհետէ կը
մարի և նիւթական շահասիրութիւնը
ժամ առ ժամ հոգու վրայ կը աիրանայ։
Ֆրանկլին այդպէսներէն չէր։ Ուշափ որ
նորա բարերաստութիւնը կ'աճէր, նոյնչափ
և կըզօրանար նորա փափագը ուրիշներուն

նպաստաւոր լինելու և ըստ կարելոյն նը-
կրտելու, որ լոյսն ու բարին աշխարհիս
մէջ հաստատուին։ Եյս անդուլ նկրտ-
ման ժամանակ չէր մոռանար, որ ինքն իր
վրայ հոգալով, իր կատարելազործութեան
վրայ աշխատելով կարող էր միայն յա-
ռաջադիմութիւն անել և իր փափագնե-
րուն հաւասար քայլ բռնել։ “Նորա ուս-
ման և զարգացման դիմաւոր աղբեկը
դարձեալ զբականութիւնն էր։

Ի՞նչ նպատակով կը կարդան շատերը,
կամ միայն ժամանակը վատնելու և կամ,
որ աւելի չարն է, վատ գրականութեան
անպիտան վիժածներու մէջ վայելք դրա-
նելու նպատակով։ Ֆրանկլին միայն անա-
րատ ու յստակ աղբեկներու կը գիմեր,
նորա ընթերցանութեան միակ խորհուրդը
մտաւոր ու բարոյական կատարելութիւն
էր։ Օտար գրականութեանց քանի մը
գանձերը թարգմանութեամբ դրուած էին
նորա առջեւ, միւսները նորա համար իս-
պատ անմատչելի փակուած էին։ Եյդ
փակուած շարադրութեանց յատուկ բը-
նազիրը կարդալու փափագ ստանալով,
նա որոշեց օտար լեզուներ սովորել։ Ի՞նչ
փափագ և յղանայր ֆրանկլինի վսեմ հո-
գին—այն և կ կատարէր անպատճառ, նա
մանաւանդ որ անկարելի բան երեք չէր
փափագէր։

Օտար լեզուներ սկսայ սովորել 1733
թ. կըսէ նա։ (Ուրիմն երբոր քսան և եօթ-
տարեկան էր)։ “Ալոք միջոցին այնչափ
ընտելացայ ֆրանսերէնին, որ այդ լե-
զուով զբքերն արդէն դիւրաւ կը կարդացի։
Եյնուհետեւ դիմեցի իտալերէնին։ Բարե-
կամներէս մէկը, որ նոյնպէս այդ լեզուն
կուսանէր, շատ անդամ միասին ձատրակ

խաղալու կը հրատիրէր զիստ Տեսնելով՝ որ այդ բանը բաւականին ժամանակ կը խլէ ինձմէն, ես վճռեցի միայն այն պայմանով՝ խաղալ հետը, որ տանողը իւրաքանչիւր խաղէն վերջը իրաւոնք ստանայ դաս մը, այսինքն բերանք սերտելու քերականական կանոն և կամ թարգմանութիւն մը տարու տարուողին, որ և պարտաւորուի աղնուարար պատրաստել զայն մինչև յետագայ տեսութիւնը։ Որովհետեւ մեք գրեթէ հաւասար կը խաղայինք, ուստի երկուքս ալ հաւասար կը ջարթենք մէկվմէկու Խտալերէնին մէջ։ Ետքը Ապանիերէն գրքեր կարդալ ուզելով այդ լեզուն ևս սովորեցի։ Վերն արդէն յիշած եմ, որ մանկութեանըս ժամանակ ես միայն մէկ տարի լաթինական վարժատուն գնացի։ Լաթիներէնը յետոյ խսպառ անտես մնաց։ Տայց Գրանսերէն, Խտալերէն, Ապանիերէն լեզուներուն ընտելանալէն վերջը, երբոր օր մը լաթիներէն Աստուածաշըւնչ ընկառ ձեռքըս, զարմանալով տեսայ, որ աւելի կը հասկնամ, քան թէ կը կարծէի։ Եյդ քաջալերութիւն տուաւ ինձ վերստին ձեռն արկանելու լաթիներէն, որ և բաւականին յաջողութեամբ սովորեցի, նա մանաւանդ որ առջեւէ ուսած լեզուներս աշխատանքս շատ կը թեթեցնէին,,,:
Զ.

ԳՐԱՆԿԱՐԻՆ ՀԵՄԱՐԱԿԱԾԻՆ ՊԱՇՏՕՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՅՆ

Պիենսիլվանիայ նահանգի պատգամաւորները միարանութիւն մը կը կաղմէին, որ Արնդհանուը ժողով, կը կոչուէր։ Ինչպէս որ մեզ յայտնի է, արդէն թղթագրամի առաջն տպագրութեան ժամա-

նակ Գրանկլին բարեկամներ գտած էր այն տեղ։ Վերջը օրացոյցի պատճառով, որ արդէն երեք անգամ լոյս տեսած էր, բարեկամներու թիւը շատցաւ, այո՛, գտանուեցան նաև մարդիկ, որք Գրանկլինի խոկական նշանակութիւնը ձանաչելով ու յարգելով, քարտուղարի պաշտօն առաջարկեցին նորան ընդհանուր ժողովի մէջ ։ Ինտրոլութենէն առաջ ժողովի անդամներէն մին թէւ աշխատեց ընկերներու մտադրութիւնը ուրիշ անձի մը վրայ ուղղել և Գրանկլինի դէմ ոգորել, սակայն և այնպէս վերջինս ձայներու բազմութեամբ ընտրուեցաւ։ Եյս բանի վրայ սրտմտելով՝ հակառակորդը նորա սիսերիմ թըշնամին դարձաւ։ Գրանկլին ի սրտէ կը ցանկար, որ դժկամակ ոսոխը հանգստանայ և հետը հաշտուի։ Օր մը նորան յայտնեցին, որ թշնամին շատ մատենասէր մարդէ և հազուագիւտ զիրք մ'ունի, որոյ վրայ սաստիկ կը պարծի։ Եյդ լսելէն ետքը Գլը բանկլին քաղաքավարի նամակ զրեց նորան ամենեին ցոյց չտալով որ նորա թըշնամութեան լուրն արդէն իր ականջին հասած էր, և ինդրեց, որ եթէ կարելի է բարեհածի զիրքն իրեն ուղարկելու քանի մ'օրուայ գործածութեան համար։ Պատգամաւորն ոչ թէ միայն զիրքն ուղարկեց, այլ և յետագայ նօտի ժամանակ բարեկամորէն ընդ առաջ ելանելով՝ աջ տուաւ նորան և ամենայն մտերմութեամբ յայտնեց, որ միշտ պատրաստ է նորա իղձերը կատարելու։ Խնչնամութեան վրայ աւել խօսք չեղաւ։ Ի՞նդհանրապէս աւելի օդտաւէտէ, — կըսէ Գրանկլին — այս անցքը պատմելէն ետքը, « խոհեմարար վերջ դընել թշնամութեան, քան թէ հետզետէ

գրգռել և սնունդ տալ նորան,, : Կա վարուեցաւ իմաստնօրէն և չըվնասեց իր պատուին:

Եյնուհետեւ ընդհանուր ժողովի ամէն տպագրելի գործերը Գրանկլինի ձեռքն անցան և բացի այսմանէ նա Գիլադելֆիայի նամակատան վերատեսչի պաշտօնն ևս ըստացաւ: Եյս պաշտօնն առաջ Տրադփորդ անուն տպագրապետը կը վարէր, որ ամենայն զօրութեամբ աշխատած էր Գրանկլինի հրատարակած օրացոյցի տարածուելուն արգելք դառնալու: Եյժմ Գրանկլին կարող էր վրէժ առնել եթէ միայն այդպիսի վատութեան ընդունակ լինէր:

Հին առասպելները կը են, թէ ամենայն ինչ որ Միդաս թագաւորը կը շօշափէր, ոսկի կը դառնար: Եյդ Գրանկլինին վերաբերելով կարելի է ասել, թէ ամենայն ինչ որ նորա գործունէութեան շրջանը կը մտնէր, բարուոքումն կըստանար, ինչ որ կը մտածէր—կեանք կընդունէր:

Գիլադելֆիայ քաղաքի մէջ թէ և կային գիշերտպահներ, բայց նոցա հրահանգումըն ու գործունէութիւնը թերատ էր: Գրանկլին վերուց այդ թերութիւնքը: Եյնուհետեւ հրկիզաշէջներու խումբ մը կաղմեց և հրդիհի դէմ ապահովիչ ընկերութիւն մը հաստատեց, որ մինչեւ այս օրս դեռ կըտեի Գիլադելֆիայի մէջ: Կահանգի սահմաններ ապահով չէին վայրենի ձնդիկներու ասպատակներէն, տեսնելով որ միայն կամաւոր զինուորներու գընդով կարելի էր վերցնել այդ չարիքը, Գրանկլին յայտնեց իր միտքը քաղաքացիներուն և առանձին գրութեամբ բացատրեց, թէ ինչպէս պէտք էր հոգ տանել

սահմաններու պաշտպանութեան վրայ: Եորա առաջարկութիւնը Գիլադելֆիայի մէջ հազար երկու հարիւր, իսկ նահանգի մէջ տաս հազար ստորագրութիւն ստանալով՝ զինուորներու գունդը իսկոյն կազմուեցաւ: Օգտաւէտ ձեռնարկութիւն մաւարտելէն վերջը Գրանկլին իսկոյն մէկ ուրիշ նորը յերեան կը հանէր: Եյդպէս, մէկ ձեմարան հիմնեց Պենսիլվանիայի մանկանաց դաստիարակութեան համար և առաջին տարին խոկ հինգ հազար Փունթի չափ յօժարակամ նպաստ ստացաւ ժողովրդէն: Վարժարանի համար հոգաբարձութիւն կազմելու ժամանակ ընդհանուր ցանկութեամբ նա ինքը նախագահ ընտրուեցաւ: այնուհետեւ վարժարանի բարգաւաճման վրայ հանապազ փոյթ քաշելով՝ մինչեւ իր մահը այս պաշտօնի մէջ մնաց: Իր խոհեմ հոգաբարձութեամբ Գլորանկլին այնպէս համբաւ ստացած էր, որ ուրիշ նահանգներու պատգամաւորներն անգամ դպրոց հիմնելէն առաջ հեռու տեղերէն նորա մօտ կուգային խորհուրդ հարցնելու: — Քաղաքի փողոցները հարթ չէին, չէին լուսաւորուած և երիկոները ու գիշերները — մանաւանդ թունդ անձրևէն յետոյ, նոցա մէջէն անցնելը կեանքի համար շատ վտանգաւոր էր: Մինչեւ որ լապտերներ ու քարայատակ չըստացան Գլորանկլին հանգիստ չառաւ: Եյնուհետեւ հիւանդանոց մէս հաստատեց տկարներու ու ծերերու համար: Աետեալ դէպքը ցոյց կուտայ, թէ ո՛քքան զգայուն էր նորա սիրտը:

Վիթֆիլդ անուամբ օտար քահանայ մը եկած էր Գէորգիայ՝ ի պէտս վարժարանի ղրամ հաւաքելու: Գրանկլին եկա-

ւորի վրայ տեղեկութիւն ստանալէն վերջը յայտնեց նորան, որ աւելի քիչ ծախքով կարող կլինէր հասնել իր նպատակին, եթէ վարժարանը Գիլադելֆիայի մէջ հաստատել ու զենար. ըստ որում Գէորգիայ նահանգը շինութեան փայտ չունի և զայն Գիլադելֆիայէն հոն տանելը շատ թանկ կընսափի: Եւյս հիմնաւոր կարծիքին բոլոր խոհեմմարդիկները հաւանութիւն տուին, բայց ոչ Վիթֆիլդ. սա իր մաքի վրայ հաստատ մնաց: Եւ Գրանկլին որոշեց նորան ոչինչ չըտալ: Որովհետեւ քաղաքի հոգեորականներէն արգելած էին Վիթֆիլդին եկեղեցեաց մէջ ճառ ասելու, ուստի իր հրաւերը նա բաց հրապարակի վրայ կը կարդար: “Օր մը պատահ մամբ ես ևս առիթ ունեցայ, կը պատմէ Գրանկլին, լսելու նորա ճառերէն մինը, որ ըստ երեսութին հանգանակութեամբ վերջանալու էր: Վեզ ոչինչ չեմ տար, ըսի ես մտքէս: Գրադանիս մէջ մէկ բուռն պղինձ ունէի, երեք կամ չորս արծաթի դոլլար և հինգ հատ ոսկի փիսթօլ: Մինչդեռ նա կը խօսէր սիրտս սկսաւ մեզմիլ և որոշեցի գէթ պղինձէ ստակս տալ նորան: Հրապուրիչ ճարուասանութիւնը գնալով այնպէս ազդեց վրաս, որ պղինձէ դիտաւորութենէս ամաչել սկսայ և որոշեցի՝ արծաթը ալ նորան տալու: Խսկ ճառի վերջն այնպէս սքանչելի էր, որ ամէն ջերերս պարպեցի և տուի ի՞նչ որ ունէի—ոսկիս և ամենայն ի՞նչ::,

Գրանկլինի գործունէութիւնը զարմանալի էր: Վեզ հիացած կը մնանք տեսնելով, որ այս՝ իր ընտանեկան պիտոյքն օրացոյցի ու լրագրի խմբագրութեան դժուարին գործերն այնպէս գեղեցիկ հոգացող:

Քաղաքային նամակատան վերատեսչութիւնն այնպիսի փութով կատարող, վերոյիշեալ հաստատութիւններն եւ ուրիշ շատ ընկերութիւններ ի լոյս կոչելով համարեայ ամէն մէկի վարչութիւնն անձամբ տնօրինող, օտար լեզուներու ուսումնասիրութիւնն անդադար շարունակող և ի վերջի վերջոյ ընդհանուր ժողովի քարտուղարութեան տաժանելի պաշտօնն եռանդով յառաջ տանող մարդը, որ այս մարդը գեռ ուսումնական յուղարկութեանց համար ևս ժամանակ կը գտնէր: Առանձին յօդուած մը պէտք կը լինէր գրելու, եթէ ուղենայինք մի առ մի յառաջ բերել նորա ուսումնական փորձերու և մտքերու ընթացքը, որք որ շանթարգելի գիւտովն վերջացան: “Եորա շարադրութիւնն այս առարկայիս վերաբերմամբ ծաղրի տակ ընկաւ: „Ի՞նչ օգուտ կարող է ծագել ուսման համար Պենսիլվանիայի անտառներէն”, կըսէին այլևայլ գիտնական շրջաններն եւ մանաւանդ Լօնդօնի մեծամիտ ուսումնականները: Բայց այնու ամենայնիւ շարադրութիւնը թարգմանուեցաւ Գրանսերէն, գերմաներէն, իտալերէն, և չը նախապաշարուած հետազօտութիւններու շնորհիւ հասարակային կարծիքը Գրանկլինի կողմը մեկնել սկսաւ: Վերջապէս ճշմարտութիւնը լայն ճանապարհացաւ, և երբ որ Բիւֆօն անուն տիեզերահուչակ ֆրանսիացի բնագէտը վճռողապէս Գրանկլինի կողմն անցաւ, թերահաւատները պապանձեցան: Լօնդօնի գիտնական պարոնները նոր նիստ մը կազմելով՝ խընդիրը վերստին քննութեան տակ դրին և վերջապէս իրենց ուսումնական մեծամտութենէն յառաջ եկած սխալը ուղղեցին.

իսկ գիտութեանց արքունական ձեմարանը պատուաւոր անդամութեան իրաւունք տուաւ շանթարգելի հեղինակին և պատուեց զնա առանձին ոսկի մեղայլով։

Որ Գրանկլինի փառաւորուելովը նորաքաղաքակիցներն ևս պարծենալու էին— ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Կետնքի ամենայն ասպարէզներու վրայ հաւասարապէս շահաւէտ ու կորովի մարդուն իրենց խորին յարգանքը յայտնելով՝ քաղաքացիք նահանգային խորհրդաւորի պաշտօն տուին նորան և վերջապէս պատգամաւոր ընտրեցին ընդհանուր ժողովի համար։ Տացի այդմանէ տեղական վարչութիւնը դատաւորի պաշտօն յանձնեց նորան և բոլոր գաղթականութեանց փոստերու գլխաւոր վերատեսուչ կարգեց։ Եթէ այնուհետեւ Գրանկլինի քաղաքակիցները նորա քաջադործութեանց լուրը կը լսէին, օրինակի համար, թէ ինչպէս 500 կամաւոր զինուորներու առաջնորդելով ձմեռուայ մէջ նահանգի հիւսիսային սահմաններէն Անդիկները վոնտեց ու սահմանները բերդերով պատսպարեց, թէ ինչպէս առանձին տեսակ հնոց մը հնարեց, բայց արտօնագիրը մերժեց, ասելով թէ ամենայն մարդ պարտաւոր է զիւտերն առանց անձնական շահի ժողովրդին նուիրելու, նա մանաւանդ որ աշխարհս մարդ չկայ որ ինքն ևս նախորդներու զիւտէն օգուտ քաղած չլինէր, — առաւել չէին զարմանար, այլ կըսէին, «դէհ, նա ամեն բան կարող է, աշխարհ նորամէն դեռ շատ բարիք կը տեսնէ,,» :

(Ն-Ռ-Հ-Հ-Ք-Է)

ԱՄԵՆԱՓԲԻՒՇ ՄԵՆԱՍՏԱՆ

Ի ՀԱՅՈՑ ԹԱՆԻ

Երբեմն անուանի և երեելի՝ իսկ բաւական ժամանակէ հետէ իսպառ աւերակ և տիրատեսիլ Ամենափրկիչ անուանեալ Մենաստան՝ որ Հաւուց կամ Հայոց— Թառ կոչեալ զիւղէն դէպ յարեւուտս մի վերստ և կէսի չափ (կամ սակաւ ինչ աւելի) հեռու Գառնւոյ գեղջ հանդէպ՝ Եզատ գետին հարաւային կողմը՝ լեռան ի լանջո՝ առանձին բլրակ ձևացած ի գագաթն՝ տափարակ՝ գեղեցիկ և բարձր զիրք ունենալով զուարձալի և ընդարձակահայեաց տեսարան և բարեխառն օդ ունի։

Բարձր և ամուր պարիսպներով շըրջանակի պատեալ է բուն Ամենափրկչի Մենաստանը, որոյ մեծ դուռն հարաւապասպին արեելեան անկեան մերձ է։

Ի միջի նոյն պարսպաց՝ երկու աւերակ եկեղեցիք կան միմեանց մօտ և զրեաթէ կից։ Հարաւային կողմինը «Գրիգոր Մագիստրոսի ի ՆԱՐ (1013) Հայոց թուականին շինել տուածն է *»։ Իսկ հիւսիսայինը ի ՈՒՃ (1712) ազգ. թուարերութեանս Աստուածատուր կաթողիկոսին նորոգ կառուցանել սկսածն է, որ ցալաթոռոսն հազիւ հասուցանելով՝ Առվկասեան ելուզակների յաճախ և աւերիչ

(*) Յայսոսիկ միջոցս շատ վանկեր՝ ոմանք տամանակ ինչ բարձի թողի մնացեալ ի բնակչացու բազումք իսպառ ամսյացան և այժմ հետզետէ շինութեանց թուլանալով՝ յերկիր կտապալին, և ի յաւերական տատրակք և բուեր կը բնակին։